ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2025 թվականի № 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՈՒՂԵՑՈՒՅՑՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. դեկտեմբերի 12-ի N 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի 17-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի հրատարակությունների ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի՝ 2016 թվականի մարտի 24-ի թիվ 2 նիստում հաստատված՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հրատարակությունների տեսակների, դրանց գրախոսմանը և տպագրության երաշխավորմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ ուղեցույցը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԻՆՔԸ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Ք. ԵՐԵՎԱՆ

Հավելված
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի
13. 05 .2025 թ. № 17 որոշման

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Սույն ուղեցույցով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) հաստիքային և պայմանագրային հիմունքներով աշխատակիցների կողմից պատրաստվող հրատարակությունների տեսակներին (այդ թվում՝ ՀՀ ՆԳՆ գործունեության հետ կապված հիմնախնդիրների գիտական մշակման առաջնահերթ ոլորտներին վերաբերող), դրանց գրախոսմանը և տպագրության երաշխավորմանը ներկայացվող պահանջները, տպագրության երաշխավորող ստորաբաժանումները:

2. Կրթահամալիրի հրատարակությունները, կախված նպատակային նշանակությունից, ստորաբաժանվում են ուսումնատեսական, ուսումնագործնական և ուսումնամեթոդական, ուսումնատեղեկատվական և ուսումնադիդակտիկ տեսակների: Պատրաստված նյութերը բովանդակությամբ և կառուցվածքով ամբողջովին պետք է համապատասխանեն հայտագրված հրատարակության տեսակին:

3. Ուսումնատեսական բնույթի հրատարակությունը կանոնավորված գիտատեսական տեղեկություններ պարունակող ուսումնական հրատարակություն է, որի շարադրանքը հարմարեցված է ուսումնասիրության և յուրացման համար: Ուսումնատեսական հրատարակությունների հիմնական տարատեսակներն են դասագիրքը, ուսումնական ձեռնարկը, դասախոսությունների դասընթացը, դասախոսությունների համառոտագրությունը, մենագրությունը, գիտական հոդվածների կամ գիտական կոնֆերանսների և նստաշրջանների նյութերի ժողովածուները: Ուսումնատեսական հրատարակության ծավալը սահմանվում է 0.25 տպագրական մամուլ 1 ժամ դասախոսական պարապմունքի համար:

4. Դասագիրքը ուսումնական առարկայի, կամ նրա մի մասի, բաժնի համակարգված շարադրանք պարունակող ուսումնական ծրագրին համապատասխանող

և, որպես հրատարակության տվյալ տեսակ, պաշտոնապես հաստատված ուսումնատեսական հրատարակություն է: Դասագիրքը բազային հրատարակություն է հանդիսանում ուսումնական առարկայի համար, իսկ մնացած բոլոր հրատարակությունները կամ հստակեցնում են, կամ լրացնում, կամ էլ զարգացնում են այն դրույթները, որոնք ներառված են դրա մեջ: Այլ կերպ ասած՝ դասագիրքը այն միջուկն է, որի շուրջ ձևավորվում է ուսումնական հրատարակությունների ողջ համալիրը: Դասագրքում պետք է արտացոլված լինեն պետական կրթական չափորոշիչի ստանդարտի դիդակտիկ միավորներով սահմանված բազային գիտելիքներ: Այդ միավորները որոշում են առարկայի ուսումնասիրման հիմնական ուղղություններն ու նյութի տեղադրման հերթականությունը: Դասագիրքը պետք է ոչ միայն բովանդակի գիտելիքների բնութագիրը, այլև բացահայտի դրանց ստացման մեթոդական կողմերը: Դասագրքի բովանդակությունը պետք է արտացոլի գիտելիքների որոշակի համակարգ, որը անհրաժեշտ է և բավարար մասնագիտությունը յուրացնելու և տվյալ բնագավառում կիրառելու համար:

5. Ուսումնական ձեռնարկը հրատարակության տվյալ տեսակի տեսքով հաստատված, ուսումնական ծրագրին համապատասխանող, դասագիրքը մասնակի կամ լրիվ փոխարինող, կամ լրացնող ուսումնատեսական բնույթի հրատարակություն է: Ուսումնական ձեռնարկի յուրաքանչյուր բաժին ուղեկցվում է ստուգողական հարցերով կամ ուսուցանող բնույթի առաջադրանքներով, որոնք կոչված են օժանդակելու տվյալ առարկայի վերաբերյալ գիտելիքների յուրացմանը: Սովորաբար ուսումնական ձեռնարկը թողարկվում է ի լրումն դասագրքի: Սակայն ուսումնական ձեռնարկը կարող է ժամանակավորապես հանդիսանալ առարկայի հիմնական ուսումնական հրատարակությունը՝ տվյալ մասնագիտության գծով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչի փոփոխման կամ ուսումնական պլաններում նոր առարկայի առաջացման հետևանքով, որով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից թույլատրված կամ երաշխավորված դասագիրք դեռ ստեղծված չէ: Քանի որ ուսումնական ձեռնարկը ստեղծվում է ավելի օպերատիվ կերպով, քան դասագիրքը, հետևաբար նրա մեջ ներառվում է տվյալ առարկային վերաբերող առավել արդիական նյութը: Այնուամենայնիվ, այդ նյութը պետք է մատուցվի դասագրքում շարադրված հիմնարար

գիտելիքների սահմաններում: Ի տարբերություն դասագրքի՝ ուսումնական ձեռնարկը կարող է ներառել ոչ միայն փորձարկված և համընդհանուր բնույթ կրող, ընդունված դրույթներ, այլև այս կամ այն խնդրի լուծման տարբեր տեսակետներ ներկայացնող վիճելի հարցեր:

6. Ուսումնական ձեռնարկի կառուցվածքի մեջ մտնում են հետևյալ պարտադիր տարրերը.

1) բովանդակություն,

2) ներածություն,

3) վերջաբան,

4) տեղեկատվական-մատենագիտական ցանկ:

7. Ուսումնական ձեռնարկի ներածությունը ներառում է՝

1) հրատարակության նպատակը,

2) ուսումնական ծրագրին համապատասխանությունը,

3) հասցեատեր ընթերցողների շրջանակը,

4) ուսումնական հրատարակության տեսակը և նրա տեղը առարկայի այլ ուսումնական հրատարակությունների համակարգում,

5) արդիականությունը,

6) հեղինակային մտահղացման առանձնահատկությունները,

7) ուսումնական ձեռնարկի օգտագործման վերաբերյալ մեթոդական ցուցումները,

8) ուսումնական ձեռնարկի կառուցվածքի ընդհանուր բնութագիրը,

9) դրա դիդակտիկ, մատենագիտական, տեղեկատվական և այլ նյութերի արդյունավետ օգտագործման առանձնահատկությունները:

8. Ուսումնական ձեռնարկի բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայի հաստատված ծրագրին: Տեքստի հիմնական մասի խորագրերը (բաժինները, գլուխներ, պարագրաֆները) պետք է համապատասխանեն ուսումնական նյութի շարադրման տրամաբանությանը և առարկայի թեմատիկ պլանին: Թեմատիկ բաժինները պետք է պարունակեն բաժնի ուսումնական նյութը ընդհանրացնող եզրակացություններ և առաջադրանքներ ուսանողների ինքնաստուգման համար (ստուգողական հարցեր, օրինակներ, վարժություններ, խնդիրներ, թեստեր): Անհրաժեշտ է պահպանել ուսումնական նյութի շարադրման հերթականության «պարզից դեպի բարդը» սկզբունքը,

սահմանումները և ձևակերպումները պետք է համապատասխանեն ընդունված գիտական տերմինաբանությանը: Վերջաբանում կատարվում է ուսումնական նյութի ընդհանրացումը՝ ներառելով՝ հիմնական արդյունքները և եզրակացությունները, չլուծված և դժվար լուծելի խնդիրների բնութագիրը, խորհրդատվություն առարկայի հետագա ինքնուրույն ուսումնասիրման համար, առարկայի (գիտության ճյուղի) զարգացման հեռանկարները: Տեղեկատվական-մատենագիտական ցանկը, կախված հրատարակության տեսակից, կազմված է ընթերցողների շրջանակը ներառող անոտացիայից, մատենագիտական ցանկից, կրճատումների և պայմանական նշանների ցանկից, ուղեցույցներից (անվանական, այբբենա-առարկայական, ժամանակագրական, համակարգային և այլն): Տասը տպագրական մամուլից ավելի ծավալով ուսումնական հրատարակություններում խորհուրդ է տրվում ներառել անվանական և այբբենա-առարկայական ուղեցույց:

9.Դասախոսությունների դասընթացը ուսումնական ծրագրին համապատասխան, ուսումնական առարկայի բովանդակությունն ամբողջովին լուսաբանող ուսումնատեսական հրատարակություն է (առանձին դասախոսությունների ժողովածու): Դասախոսությունների դասընթացը մեկ կամ մի քանի հեղինակների դասախոսությունների տեքստեր են առանձին թեմաների, կամ ամբողջ դասընթացի վերաբերյալ: Այն կարելի է դիտարկել նաև որպես դասագրքի լրացում: Որպես կանոն,այդ հրատարակությունը նոր, ինքնատիպ նյութերի շնորհիվ զարգացնում է դասագրքի բովանդակությունը: Դասախոսությունների դասընթացում վառ դրսևորվում են տեքստի հեղինակային սկզբունքները: Այդպիսի նյութերում տեքստը անհատականացվում է և արտացոլում է տվյալ ուսումնական դասընթացը վարող դասախոսի լեզվական և ոճական առանձնահատկությունները: Սակայն հեղինակային տեքստի ինքնատիպությունն ու շարադրման ոճը չպետք է դժվարացնեն ուսումնական նյութի հիմնական բովանդակության ընկալումը: Ընդ որում դասախոսությունները պետք է համապատասխանեն տվյալ առարկայի ուսումնական ծրագրին: Դասախոսությունների տեքստը դասընթացում կազմվում է արդեն ընթերցված նյութի հիման վրա: Հեղինակը (հեղինակները) բացահայտում է կոնկրետ խնդիրներ, առաջադրում է վիճելի հարցեր, փաստարկում է սեփական դիրքորոշումը: Այս ամենը լուրջ ուսուցանող ազդեցություն ունի, քանի որ ուսանողին ցույց է տալիս ուսումնական նյութի մեթոդաբանական կողմերը:

10. Դասախոսությունների համառոտագրությունը դասախոսի կողմից կարդացվող ամբողջ դասընթացի նյութը սեղմ ձևով արտացոլող ուսումնատեսական հրատարակություն է: Դասախոսությունների համառոտագրությունները հրատարակվում են ըստ նոր առարկայի, հատուկ դասընթացի կամ որպես դասագրքի լրացում: Վերջինիս դեպքում՝ դասախոսություններում առաջադրվում են նոր խնդիրներ, առաջարկվում այլընտրանքային լուծումներ, գիտության բնագավառում կամ մարդկային գործունեության ոլորտում զարգացման յուրատեսակ ուղղություններ:

11. Գիտական հոդվածների կամ գիտական կոնֆերանսների և նստաշրջանների նյութերի ժողովածուներում համակարգված ձևով ներկայացվում են Կրթահամալիրի աշխատակիցների և այլ բուհերի և կազմակերպությունների աշխատակիցների կողմից որոշակի ընդհանուր թեմայի վերաբերյալ պատրաստված գիտական հոդվածները և գիտական կոնֆերանսների և նստաշրջանների ժամանակ ներկայացված զեկուցումները:

12. Մենագրությունը գիտական կամ գիտահանրամատչելի հրատարակություն է, որը բովանդակում է մեկ հիմնախնդրի կամ թեմայի լրիվ և բազմակողմանի հետազոտություն: Մենագրության նպատակն է առավել մատչելի ձևով ներկայացնել տևական գիտական գործունեության արդյունքները, շեշտադրել հիմնախնդրի առավել առանցքային կողմերը: Մենագրությունը ենթադրում է նաև տվյալ հիմնախնդրի վերաբերյալ առկա գրականության լուրջ ուսումնասիրություն և ընդհանրացում: Մենագրության ծավալը կազմում է 3-5 տպագրական մամուլ: Մենագրությունը կարող է գրվել համահեղինակների կողմից, «մենագրություն» տերմինը ցույց է տալիս քննարկվող հիմնախնդրի եզակիությունը, նեղ ուղղվածությունը:

13. Ուսումնագործնական հրատարակությունը գիտագործնական և կիրառական բնույթի գիտելիքներ պարունակող, ուսումնասիրման և յուրացման համար դյուրին կերպով շարադրված ուսումնական հրատարակություն է: Նախատեսված է ուսումնատեսական հրատարակություններից ստացված գիտելիքների ամրապնդման և ստուգման համար: Ուսումնագործնական հրատարակությունների հիմնական տարատեսակներից են պրակտիկումները, քրեստոմատիաները, ստուգողական աշխատանքների (հանձնարարությունների) ժողովածուները, խնդիրների ժողովածուները (խնդրագրքերը), թեստային վարժությունների ժողովածուները, արտասահմանյան տեքստերի ժողովածուները, իրավական ակտերի կամ դրանց քաղվածքների

ժողովածուները: Ուսումնագործնական հրատարակության ծավալը սահմանվում է 1 ժամ գործնական լաբորատոր պարապմունքների համար 0.25 տպագրական մամուլ, բայց 2 տպագրական մամուլից ոչ պակաս:

14. Պրակտիկումը (գործնական աշխատանքների նկարագրման ժողովածու, լաբորատոր պրակտիկում) որոշակի դասընթացի շրջանակներում լաբորատոր և պրակտիկ աշխատանքների կատարման համար թեմատիկա, հանձնարարություններ և մեթոդական խորհրդատվություն պարունակող ուսումնագործնական հրատարակություն է, որը նպաստում է անցած նյութի յուրացմանը, ամրապնդմանը և գիտելիքների ստուգմանը: Պրակտիկումները ուղղված են ճանաչման այն ձևերի և մեթոդների յուրացմանը, որոնք օգտագործվում են գիտության կամ գործունեության համապատասխան բնագավառում: Դրանցում առկա են անցած դասընթացի յուրացման օժանդակող հանձնարարություններ, գործնական բնույթի վարժություններ և դրանց կատարման համար մեթոդական խորհրդատվություններ: Պրակտիկումի յուրաքանչյուր թեմա կարող է ուղեկցվել տեսական նյութի հակիրճ շարադրմամբ կամ տեղեկատվական ինֆորմացիայով: Պրակտիկումի կառուցվածքն արտացոլում է նյութի շարադրման հերթականությունը, որն ընդունված է ուսումնական ծրագրով:

15.Ստուգողական աշխատանքների (հանձնարարությունների) ժողովածուն որոշակի դասընթացի շրջանակներում թեմատիկա, հանձնարարություններ և լաբորատոր կամ գործնական աշխատանքներ կատարելու համար մեթոդական խորհրդատվություն պարունակող ուսումնագործնական հրատարակություն է, որը նպաստում է անցած նյութի յուրացմանը, ամրապնդմանը և գիտելիքների ստուգմանը:

16. Խնդիրների ժողովածուն (խնդրագիրքը) որոշակի դասընթացի շրջանակներում խնդիրներ և դրանց լուծման համար մեթոդական խորհրդատվություն պարունակող ուսումնագործնական հրատարակություն է, որը նպաստում է անցած նյութի յուրացմանը, ամրապնդմանը և գիտելիքների ստուգմանը:

17. Թեստային վարժությունների ժողովածուն որոշակի դասընթացի շրջանակներում թեստային վարժություններ պարունակող ուսումնագործնական հրատարակություն է, որը կարող է ներառել փակ, բաց, խառը, մեկ կամ մի քանի ճիշտ պատասխաններով թեստեր:

18. Արտասահմանյան տեքստերի ժողովածուն որոշակի դասընթացի շրջանակներում արտասահմանյան լեզուն ուսումնասիրելու համար արտասահմանյան տեքստեր և մեթոդական խորհրդատվություններ պարունակող ուսումնագործնական հրատարակություն է, որը նպաստում է անցած նյութի յուրացմանը, ամրապնդմանը և գիտելիքների ստուգմանը:

19. Քրեստոմատիան ուսումնական առարկայի ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող և դասագրքի բովանդակությունը պատկերող ընտրված գեղարվեստագրական, պաշտոնական, գիտական և այլ ստեղծագործությունները կամ դրանց հատվածները պարունակող ուսումնագործնական հրատարակություն է: Քրեստոմատիան նպաստում է անցած նյութի յուրացմանն ու ամրապնդմանը, լրացնում և ընդլայնում է սովորողների գիտելիքները: Քրեստոմատիայում կարևոր տեղ են գրավում մեթոդական ցուցումները, որոնցում պարզաբանվում են ներառված տեքստի առանձնահատկությունները,բացահայտվում է նրա կապը ուսումնական նյութի հետ: Մեթոդական ցուցումները կողմնորոշում են ուսանողին սեմինարներին և գործնական պարապմունքներին պատրաստվելու ժամանակ: Քրիստոմատիայի մեջ ընդգրկված յուրաքանչյուր տեքստ պետք է ուղեկցվի այն հրատարակության մատենագիր նկարագրմամբ, որտեղից այն վերցված է:

20. Իրավական ակտերի կամ դրանց քաղվածքների ժողովածուի մեջ համակարգված ձևով ներկայացվում են կարգավորման առարկայի կամ ընդունող մարմնի ընդհանրության հատկանիշով միավորված իրավական ակտերը կամ դրանց քաղվածքները:

21. Ուսումնամեթոդական հրատարակությունը ուսումնասիրման և յուրացման համար հարմար ձևով շարադրված ուսումնական հրատարակություն է, որը պարունակում է համակարգված նյութեր՝ գործնական հմտությունների ձեռքբերման և ամրապնդման համար: Ուսումնամեթոդական հրատարակությունների հիմնական տարատեսակներն են ստուգողական, կուրսային, դիպլոմային աշխատանքների կատարման համար մեթոդական խորհրդատվությունները: Կուրսային, դիպլոմային աշխատանքների կատարման մեթոդական խորհրդատվությունները (դիպլոմային, կուրսային աշխատանքի նախագիծ գրելու ձեռնարկ) ներառում են աշխատանքների թեմատիկան և դրանց

կատարման մեթոդական ցուցումները և առաջարկվող գրականության ցանկը: Ուսումնամեթոդական հրատարակության ծավալը կազմում է 1.5-3 տպագրական մամուլ:

22. Ուսումնատեղեկատվական հրատարակությունը գիտական կամ կիրառական բնույթի համառոտ տեղեկություն պարունակող, դրանց դյուրին որոնման համար հարմար դասավորված և ուսուցման համար նախատեսված ուսումնական հրատարակություն է:

23. Ուսումնադիդակտիկ հրատարակությունը որոշակի առարկայի ուսումնասիրմանը կամ դասավանդմանը օգնող նյութեր պարունակող ուսումնական հրատարակություն է, որի բովանդակությունն արտահայտված է նկարչա-գրաֆիկական միջոցներով, համառոտ բացատրական տեքստով կամ առանց դրա:

24. Կրթահամալիրի հրատարակությունները ենթակա են գրախոսման այլ բուհերի ամբիոնների, ֆակուլտետների մեթոդական խորհուրդների, հրատարակության թեմային համապատասխան գործունեության ոլորտի մարմինների և կազմակերպությունների կողմից:

25. Գրախոսության մեջ պետք է օբյեկտիվ գնահատական տրվի ուսումնական հրատարակության բնագրին, կատարվի դրա առավելությունների և թերությունների վերլուծությունը, արվեն խորհրդատվություններ ուսումնական գործընթացում ուսումնական հրատարակությունը կիրառելու վերաբերյալ: Գրախոսությունը բաղկացած է 3 մասից՝ ընդհանուր մաս, վերլուծություն (ըստ էջերի դիտողություններով) և վերջաբան:

26. Ընդհանուր մասը պարունակում է բնագրի գնահատականն ըստ հետևյալ չափանիշների՝ համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչի պահանջներին, տվյալ բնագավառի գիտելիքների համապատասխանությունը ժամանակակից գիտական պատկերացումներին, հաշվի առնելով մասնագիտական կրթական ծրագրերի մակարդակը, ուսումնական և ուսումնամեթոդական նյութի բովանդակության համապատասխանությունը ուսումնական առարկայի նպատակներին, ուսումնական նյութերի կառուցվածքին և մեթոդական ապարատին ներկայացվող պահանջների համապատասխանությունը, ուսումնական նյութի կանոնավորությունը միջառարկայական կապերի համատեքստում, ուսուցման և արդյունքներին հասնելու համար մասնագիտական մոտեցման տրամաբանության մեջ կոնկրետ նպատակների և խնդիրների առկայությունը, նորարարության, նորույթի աստիճանը, ինքնատիպ հեղինակային մտահղացման առկայությունը, հատուկ տերմինաբանության և նշանների

օգտագործման կանոնավորությունը, շարադրման հստակությունը, հասանելիությունը, բովանդակության կրկնակիության բացակայությունը, գրականության օգտագործման լիարժեքությունը, աղբյուրներին հղումների առկայությունը, ստուգողական հարցերի և առաջադրանքների՝ ուսումնական նյութի բովանդակությանը համապատասխանության աստիճանը, սխեմաների, գրաֆիկական պատկերների, գծագրերի ներառման նպատակահարմարությունը, դրանց համապատասխանությունը տեքստին, դրանց կողմից համապատասխան ֆունկցիաների կատարումը (օբյեկտների, գործընթացների պատկերավորության ապահովումը, դրանց միջև կապերի բացահայտումը, տեքստի իմաստի խորացումը, մեկնաբանությունը, բացատրությունը, օգնությունը գիտելիքների մտապահման և յուրացման հարցում), սխեմաների, գրաֆիկական պատկերների, գծագրերի տեղակայման ճշտությունը, որակը, տրամաբանական և ոճական սխալների առկայությունը:

27. Վերլուծությունը պետք է պարունակի գրախոսի նկատած բնագրի թերությունների (ոչ ճշգրիտ կամ սխալ ձևակերպումներ, իմաստային կամ ոճային սխալանքներ և այլն) մանրակրկիտ թվարկումը, ինչպես նաև գրախոսի կարծիքով կրճատման կամ վերամշակման ենթակա՝ բնագրի առանձին մասերի մատնանշումը:

28. Վերջաբանում տրվում է հստակ հիմնավորված եզրահանգում գրախոսվող բնագրի, որպես տվյալ առարկայի ուսումնական հրատարակության համապատասխան տեսակի, օգտագործման նպատակահարմարության վերաբերյալ (հաշվի առնելով կատարված դիտողությունները):

29. Եթե գրախոսության մեջ առկա են քննադատական դիտողություններ և բնագրում ուղղումներ մտցնելու առաջարկություններ, ապա գրախոսությանը պետք է կցված լինի գրախոսի դիտողություններին հեղինակի պատասխանը, որում նշվում է, թե գրախոսի որ դիտողություններ ու առաջարկություններն են հաշվի առնվել հեղինակի կողմից, իսկ որոնք՝ ոչ և ինչ պատճառով:

30. Գրախոսության կառուցվածքային մասերն են՝ փաստաթղթի տեսակի անվանումը (գրախոսություն), բնագրի ճշգրիտ անվանումը, որի համար տրվում է գրախոսությունը, հեղինակի ԱԱՀ, գրախոսության բովանդակությունը, գրախոսի ԱԱՀ, նրա գիտական աստիճանը, կոչումը, պաշտոնը, կազմակերպության անվանումը, գրախոսի ստորագրությունը, ամսաթիվը, գրախոսի ստորագրությունը վավերացնող

(հավաստիացնող) անձի ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը, ստորագրության վավերացման ամսաթիվը, կնիքը:

31. Կոլեկտիվ գրախոսությունը լրացուցիչ պարունակում է՝ գիտական կոլեկտիվի (ամբիոնի, բաժնի, լաբորատորիայի, խորհրդի և այլնի) նիստի արձանագրության ամսաթիվը և համարը, որի ժամանակ անց է կացվել բնագրի քննարկումը, բնագրի քննարկմանը մասնակցող գիտական կոլեկտիվի (ամբիոնի, բաժնի, լաբորատորիայի, խորհրդի և այլնի) աշխատակիցների ազգանունները, գիտական կոլեկտիվի ղեկավարի ստորագրությամբ, կոլեկտիվի կողմից տրված հրատարակման երաշխավորագիրը: Չի թույլատրվում կոլեկտիվ գրախոսությունը ձևակերպել բնագիրը քննարկող կոլեկտիվ նիստի արձանագրության քաղվածքի տեսքով:

32. Կրթահամալիրի հրատարակությունները պետք է երաշխավորվեն տպագրության Կրթահամալիրի գիտական խորհրդի կամ մեթոդական խորհրդի կողմից:

33. Կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից տպագրության են երաշխավորվում՝

1) դասագիրքը,

2) ուսումնական ձեռնարկը,

3) մենագրությունը,

4) դասախոսությունների դասընթացը,

5) դասախոսությունների համառոտագրությունը,

6) գիտական հոդվածների կամ գիտական կոնֆերանսների և նստաշրջանների նյութերի ժողովածուները,

7) ՀՀ ՆԳՆ գործունեության հետ կապված հիմնախնդիրների գիտական մշակմանը նվիրված հրատարակությունները:

34. ՀՀ ՆԳՆ գործունեության հետ կապված հիմնախնդիրների գիտական մշակման առաջնահերթ ոլորտներն են՝

1) ՀՀ ՆԳՆ միջազգային համագործակցության ոլորտը,

2) ՀՀ ՆԳՆ օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտը,

3) ՀՀ ՆԳՆ կողմից հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման ուղղված գործունեության ոլորտը,

4) ՀՀ ՆԳՆ թույլատվության և լիցենզավորման գործունեության ոլորտը,

5) ՀՀ ՆԳՆ աշխատանքների պլանավորման, որոշումների կայացման վերաբերյալ ոլորտը,

6) ՀՀ ՆԳՆ պատմության վերաբերյալ ոլորտը:

35. Կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից տպագրության երաշխավորելու դեպքում անհրաժեշտ է համապատասխան ամբիոնի (կրթաճյուղի), կրթության որակի ապահովման և գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժինների, Կրթահամալիրի մեթոդական խորհրդի երաշխավորությունները և առնվազն երկու գրախոսություն՝ պատրաստված գիտական աստիճան ունեցող անձանց կողմից: Կրթության որակի ապահովման և գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժինների կողմից տրվող երաշխավորությունը առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն հրատարակվող նյութի արդիականության և սույն ուղեցույցում ներկայացված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ:

36. Կրթահամալիրի մեթոդական խորհրդի կողմից տպագրության են երաշխավորվում՝

1) պրակտիկումները,

2) քրեստոմատիաները,

3) իրավական ակտերի կամ դրանց քաղվածքների ժողովածուները,

4) ստուգողական, կուրսային, դիպլոմային աշխատանքների կատարման համար մեթոդական խորհրդատվությունները,

5) ստուգողական աշխատանքների (հանձնարարությունների) ժողովածուները,

6) խնդիրների ժողովածուները (խնդրագրքերը),

7) թեստային վարժությունների ժողովածուները,

8) արտասահմանյան տեքստերի ժողովածուները,

9) ուսումնատեղեկատվական հրատարակությունը,

10) ուսումնադիդակտիկ հրատարակությունը:

37. Կրթահամալիրի մեթոդական խորհրդի տպագրության երաշխավորելու դեպքում անհրաժեշտ է համապատասխան ամբիոնի (կրթաճյուղի), կրթության որակի ապահովման և գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժինների երաշխավորությունները, և առնվազն մեկ գրախոսություն՝

պատրաստված գիտական աստիճան ունեցող անձանց կողմից: Կրթության որակի ապահովման և գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժինների կողմից տրվող երաշխավորությունը առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն հրատարակվող նյութի արդիականության և սույն ուղեցույցում ներկայացված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ: